ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը՝ <<ԿՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/1>>

Սոլակի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **սեղմված բնական գազի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԿՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/1>>** ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Հ/հ	Գնման առարկայի համառոտ նկարագրություն	Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝ այդպիսիք լինելու դեպքում	Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի	Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն
1	Սեղմված բնական գազ	<<Հ Ա Շ Բեսթ>> ՍՊԸ, <<ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> Լ(Տ)Ը	4-րդ կետի	Գնահատող հանձնաժողովի 29.01.2020թ. թիվ 2 արձանագրությունը կցվում է

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **<<ԿՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/1>>** ծածկագրով գնումները համակարգող **Ս. Կարապետյանին:**

Հեռախոս՝ **098 17 11 86**

Էլեկտրոնային փոստ՝ **solakgyuxapetaran@mail.ru**

Պատվիրատու՝ **Սոլակի համայնքապետարան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

<<ԿՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

_29_ _հունվարի_ _2020թ._
ժամը _10^{00}_

գ. Սոլակ

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի նիստը նախագահող՝ **Սերոբ Կարապետյան**
Հանձնաժողովի անդամ՝ **Գոհարիկ Հարությունյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Քնարիկ Սուքիասյան**

1. <<ԿՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

1.1 Սոլակի համայնքապետարանի կարիքների համար սեղմված բնական գազի գնման նպատակով Սոլակ համայնքի ղեկավարի կողմից 2020 թվականի հունվարի 13-ին գնման գործընթացի վերաբերյալ արձակվել են թիվ 5 և 6 կարգադրությունները, որոնք բովանդակային առումով հստակ չեն սահմանում պատասխանատու ստորաբաժանման և գնահատող հանձնաժողովի գործառույթները:

1.2 Ձևավորված գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի հունվարի 14-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել են գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը, որոնք կազմվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջների խախտմամբ, մասնավորապես՝

- 2020 թվականի հունվարի 10-ի գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված գնումների պլանում ներառվել է <<սեղմված գազի արժեք>> գնման առարկան՝ 6700 խմ (միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)՝ 09411700), սակայն հրավերում սահմանվել է <<սեղմված բնական գազ>> գնման առարկան՝ 7000 խմ, մինչդեռ և գնումների պլանում, և հրավերում գնման առարկան պետք է սահմանվեր <<սեղմված բնական գազ>> գնման առարկան՝ չափման միավորը՝ կգ, միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)՝ 09411710:
- Գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի հունվարի 14-ի թիվ 1 որոշմամբ հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և ժամը (հայտերի բացում) սահմանվել է 2020 թվականի հունվարի 20-ին ժամը 15:00-ին, մինչդեռ գնումների պաշտոնական տեղեկագրում գնման ընթացակարգի արդիականության ժամկետ է սահմանվել 2020-01-17 22:49:18-ից մինչեւ 2020-01-24 15:00:00 ժամը ներառյալ:
- Հաստատված հրավերի 10-րդ բաժնով սահմանվել են որակավորման և պայմանագրի ապահովումներ բանկային երաշխիքների տեսքով, սակայն գնումների պլանով նախատեսված գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցել գնումների բազային միավորի տասնապատիկը, որը լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում հնարավոր մասնակիցների մասնակցությունն ապահովելու համար:
- Գնումների պլանով հստակ սահմանվել է, որ առկա են ֆինանսական միջոցներ, սակայն պայմանագրի նախագծի 8.15-րդ կետում սահմանվել է, որ <<Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:....>>:

1.3 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով վերոգրյալը և ելնելով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման անհրաժեշտությունից՝ հանձնաժողովը որոշեց.

- <<ԿՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:
- Սոլակի համայնքապետարանի կարիքների համար սեղմված բնական գազի գնման նպատակով կազմակերպել գնանշման հարցման ընթացակարգ՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

2. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նիստը նախագահող՝ _____ **Ս. Կարապետյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամ՝ _____ **Գ. Հարությունյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Ք. Սուքիասյան**
(ստորագրությունը)